

Ա. Մ. Սուքիասյան

ՀԱՄԱՌՈՒՄՍ ՍԿՆԱՐԿ ՍՈՒԷՏԱԿՈՆ ՇՐՋԱՆԻ ՀԱՅ-ՌՈՒՍԵՐԷՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱՌԱՐԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ

Մեծ է հայ-ռուսերեն բառարանագրության դերը հայ-ռուսական քաղաքական, կուլտուրական և դիտական կապերի բնագավառներում:

Ռուս-հայերեն տպագիր բառարանագրությունը սկիզբ է առնում 18-րդ դարի երկրորդ կեսերին, երբ 1788 թ. ս. Պետերբուրգում լույս են տեսնում նախ՝ Կլեոպատրա Սարաֆյանի ռուս-հայերեն և հայ-ռուսերեն բառարանները՝ «Բանալի լեզուագիտութեան» ընդհանուր վերնագրով և ապա՝ Գրիգոր խալդարյանի հայերեն-ռուսերեն բառարանը՝ «Շաւիղ լեզուագիտութեան» վերտառությամբ:

19-րդ դարում ավելի մեծ ծավալ է ստանում ռուս-հայերեն բառարանների կազմության աշխատանքը, որին նպաստում են որոշ քաղաքական և սոցիալական հանգամանքներ: 1826—27 թթ. ռուս-պարսկական պատերազմից և Արեւելյան Հայաստանը Ռուսաստանին միավորելու պատմական ակտից հետո ամրապնդվում են հայ ժողովրդի քաղաքական, տնտեսական և կուլտուրական կապերը ռուս ժողովրդի հետ: Այդ ժամանակաշրջանից սկսած ռուս-հայերեն բառարանների կազմումը կենսական պահանջ է դառնում:

19-րդ դարի ընթացքում հրատարակվում են Ալամդարյանի, Կարապետ Պապովի, Նրիցփոխյանի, Հովհաննիսյանի, Հախպատյանի, Լեւինի, Յաղուրյանի, Տեր-Արքազմյանի, Մառի և այլոց ռուս-հայերեն և հայ-ռուսերեն բառարանները:

20-րդ դարի սկզբին ռուս-հայերեն բառարանագրությունը նշանավորվեց Դադրաշյանի ռուս-հայերեն և հայ-ռուսերեն բառարաններով, որոնց հրատարակությունը իսկապես նշանակալից շրջանի ռուս-հայերեն բառարանագրության ամենախոշոր իրադարձությունը պետք է համարել:

Դադրաշյանի «Ռուս-հայերեն լիակատար բառարան»², որը պարունակում է 125 հազար բառ, իր ռուսական և հայկական բաժիններով նույնատիպ նախորդ բառարանների համեմատությամբ աչքի է ընկնում խոշոր առավելություններով:

Ոչ պակաս արժեք ունի նաև նույն հեղինակի «Հայ-ռուսերեն լիակատար բառարան»³, ինչպես նաև հայկական բառացանկը համարվում էր ամենաընդարձակը՝ նախքան Սոս. Մալխասյանցի «Հայերեն բացատրական բառարան»⁴ հրատարակությունը: Իր թերություններով հանդերձ՝ այդ բառարանը նույնատիպ բառարանների մեջ առայժմ իր ծավալով մնում է 1944-1945 թթ. թվականներին:

Դադրաշյանի բառարանները փաստորեն հանրագումարի բերեցին հայ-ռուսերեն բառարանագրության նախորդ շրջանի հարուստ փորձը և տասնյակ տարիներ հաջորդությամբ ծառայեցին ժողովրդի լայն զանգվածներին:

Սովետական իշխանության տարիներին ավելի մեծ հնարավորություններ ստեղծվեցին

1 Գ. Գ ա ս պ ա ղ յ ա ն, Հայ-ռուսական բառարանագրության ներդրումը հայ կուլտուրայի մեջ, Մառի անվան լեզվի ինստիտուտի աշխատությունների ժողովածու, հատոր Գ, Երևան, 1948, էջ 193—191:

2 Հ. Դ ա դ ռ ա շ յ ա ն, Ռուս-հայերեն լիակատար բառարան, Թիֆլիս, 1906:

3 Հ. Դ ա դ ռ ա շ յ ա ն, Հայ-ռուսերեն լիակատար բառարան, Թիֆլիս, 1911:

4 Ս. Մ ա լ խ ա ս յ ա ն, Հայերեն բացատրական բառարան, Երևան, 1944—45:

ռուս-հայերեն բառարանագրության զարգացման համար, Հայ ժողովրդի կուլտուրայի, գիտության և այլ բնագավառներում ուսաց լեզվի խաղացած հարաճուն գերավ է պայմանավորված սովետական իշխանության տարիներին հայ-ռուսերեն բառարանագրության հետագա ծաղկումն ու զարգացումը, նվ պատահական չէ, որ էթն 130 տարուց սովելի ժամանակաշրջան ընդգրկող ռուս-հայերեն բառարանագրության նախասովետական շրջանում հրատարակվել են ռուս-հայերեն և հայ-ռուսերեն մոտ 20 բառարաններ, ապա սովետական իշխանության շրջ տասնամյակների ընթացքում այդ բառարանների թիվը կրկնապատկվել է: Սրեկ քանակական գերազանցությունը չէ, որ բնորոշ է սովետական շրջանի ռուս-հայերեն բառարանագրությանը: Այդ շրջանը հատկանշական է նրանով, որ ընդգրկում է և՛ բնույթով և՛ ծավալով երկլեզվյան բառարանների համարյա բոլոր տիպերը՝ ընդհանուր, տերմինաբանական, մասնագիտական (բացատրական) և մեծ, միջին և համառոտ (դպրոցական) երկլեզվյան բառարաններ:

1. Ռուս-հայերեն մեծածավալ (ընդարձակ) բառարաններ

20-ական թվականներին, Հայաստանի սովետականացման առաջին տարիներին լեզվի բնագավառում առաջնահերթ հարց էր հանդիսանում տերմինաշինարարությունը, հետևաբար և տերմինաբանական բառարանների հրատարակությունը: Ռուս-հայերեն երկլեզվյան ընդհանուր բառարանների պահանջը այնքան էլ հրաուապ չէր, որովհետև Դաղբաշյանի ընդարձակ բառարանները ժամանակավորապես կարող էին բավարարել հասարակության կարիքները: Հետագայում, 30-ական թվականներին միայն՝ սուր կերպով գրվեց ռուս-հայերեն երկլեզվյան ընդհանուր բառարան կազմելու և հրատարակելու խնդիրը: 2. Դուրբաշյանի առաջին հայացքից ակնածանք պատճառող 125 հազար բառ պարունակող բառարանը այլևս չէր ամփոփում ուսաց և հայոց լեզուների բառապաշարները, որոնց մեջ որոշակի փոփոխություններ էին կատարվել: Այն բոլոր հակասությունները, որոնք բնորոշ էին 30-ական թվականների ուսաց և հայոց լեզուների բառապաշարների զարգացմանը, էրենք բոլոր կողմերով գրսևորվել են ռուս-հայերեն նոր բառարանի⁵ ուսական և հայկական մասերում:

Ռուս-հայերեն նոր բառարանի⁶ ուսական բառացանկին աղբյուր են ծառայել, ինչպես նշում են հեղինակները, Դալի քառահատոր բառարանը, Նևսերի և Պիշեի ռուս-գերմաներեն և Ռոյանուսի ու Մյուլլերի ռուս-անգլերեն բառարանները, իսկ ռուս-հայերեն բառարաններից՝ 2. Դաղբաշյանի, Գ. Երիցփոխյանի, Կ. Յաղոբյանի և այլոց բառարանները: Բացի վերոհիշյալ աղբյուրներից՝ օգտվել են նաև սովետական շրջանի պարբերական մամուլից և քաղաքական ու հասարակական գրականությունից, հատկապես նոր հարաբերություններ և երևույթներ արտահայտող բառերով ու արտահայտություններով բառացանկը համալրելու համար:

Ռուս-հայերեն նոր բառարանը պարունակում է մոտ 80 հազար բառ ու արտահայտություն. այս թիվը համընկնում է Ուշակովի բառարանի⁶ բառերի քանակի հետ: Հետաքրքրականն այն է, որ կազմվելով համարյա նույն շրջանում Ուշակովի և հայ-ռուսերեն բառարանները իրարից անկախ, մոտ 80 հազար բառերի սահմաններում ամփոփել են այդ շրջանի ուսաց լեզվի բառապաշարը: Համեմատությունները ցույց են տալիս, որ սույն բառարանների բառացանկերի մեջ հիմնականում էական տարբերություններ գոյություն չունեն:

Ռուս-հայերեն նոր բառարանի⁶ ուսական բառացանկը կազմվելով Ուշակովի բառարանից անկախ, ճշտությամբ արձանագրել է ուսաց լեզվի վիճակը 30-ական թվականներին և փաստորեն կարող է համարվել ուսական բառարանագրության կատարյալ բառացանկերից մեկը, որը և նրա կարևոր արժանիքներից մեկն է:

Ի տարբերություն նախորդ ռուս-հայերեն բառարանների՝ նոր բառարանի ուսական բառացանկում ներգրավված են մեծ թվով նորակազմություններ, որոնք երևան են եկել որպես արդյունք ուսական կյանքում տեղի ունեցած տնտեսական և հասարակական-քաղաքական խոշոր տեղաշարժերի:

⁵ Ք. Ավդալբեկյան, Պ. Սոտնիկյան, Ե. Տեր-Մինասյան, Վ. Փոթեյան, Ռուս-հայերեն նոր բառարան, Երևան, Ա հատոր, 1933, Բ հատոր, 1935:

⁶ «Толковый словарь русского языка», под редакцией проф. Д. И. Ушакова. Москва, 1934—1940.

Ի տարբերություն Հ. Դադբաշյանի ռուս-հայերեն բառարանի՝ սույն բառարանի հեղինակները ավելի լուրջ մոտեցում են ցուցաբերել մասնագիտական տերմինաբանության բնարության և տեղագրման հարցերին, նրանք խուսափել են նեղ մասնագիտական բնույթի շատ տերմիններից և բառացանկում աշխատել են ներգրավել այնպիսիները միայն, որոնք բնորոշ են լեզվում՝ գիտության և տեխնիկայի տվյալ ճյուղի կամ մասնաճյուղի համար իրենց ունեցած հասարակական դերով և նշանակությամբ, լեզվի մեջ գործածության աստիճանով:

Նախորդ ռուս-հայերեն բառարանների համեմատությամբ, սույն բառարանը հարուստ է նաև դարձվածաբանությամբ՝ զանազան տիպի կապերով բառակապակցություններով, իդիոմատիկ արտահայտություններով, ինչպես նաև բաղադրյալ տերմիններով. «орбитальный канал», «железная дорога», «прямая кишка», «прямой эфир», «бегство» և այլն: Բառարանում մեծ չափով տեղ են գտել նաև օժանդակ բաղադրյալ բառերը, ինչպես՝ «в силу», «с помощью», «потому что», «так как», «тем не менее», «между тем» և այլն, ինչպես նաև զանազան տիպի բայական կապակցություններ. «быть в бегах», «поскаться в бегство», «открыть сердце», «открыть стрельбу» և այլն:

Այսպիսով, ռուս-հայերեն նոր բառարանիս ռուսական բառացանկը, որ պարունակում է 80 հազար բառ և դարձված, ընայած վերահիշյալ մասնակի թնոթյուններին, արտացոլում է ուսաց լեզվի վիճակը 30-ական թվականներին և լիովին բավարարում է այդ կարգի բառարաններին ներկայացվող պահանջները: Բառարանի առավելություններից անհրաժեշտ է նշել նաև համապատասխան բերականական նշումները, որոնք տրվում են ռուսական բառերին:

Ռուս-հայերեն բառարանի հաջողության մեծ մասը կախված է ոչ միայն ռուսական բառացանկից, այլև թարգմանական՝ հայերեն մասից: Հեղինակները, ինչպես նշում են բառարանի առաջարանում, խուսափել են նկարագրական, բացատրական եղանակից և հետևել են ռուսերեն բառի դիմաց համապատասխան քառ կամ տերմին տալու սկզբունքին:

Բառարանի հայկական մասում ամփոփված են ոչ միայն 30-ական թվականների հայ գրական լեզվի ակտիվ և պասսիվ բառապաշարը, այլև որոշ ժանկություններ գրաբարյան, բարբառային և փոխառյալ բառեր: Վերահիշյալներից բացի, բառարանում տեղ են գտել նաև բազմաթիվ նորակազմություններ, որոնց մեջ կան նաև արհեստական և շինծու շատ բառեր:

Բառարանի հայկական բաժնի առավելություններից է նաև հոմանիշների առատությունը:

Որոշակի արժեք են ներկայացնում բոլոր այն նոր բառերը, որոնք առաջին անգամ են բառարանագրական մշակման ենթարկվել: Բառարանում ընդգրկված հայերեն նոր բառերը կարելի է բաժանել երկու կարգի՝ ռուսերենից կատարված փոխառություններ և նորակազմություններ:

1) Սույն բառարանում առաջին անգամ մենք հանդիպում ենք ռուսերենից կատարված փոխառությունների. որոնց թիվը հազարի է հասնում: Մեր հաշվումներով միայն Ա տառի տակ Հ. Դադբաշյանի ռուս-հայերեն բառարանի համապատասխան հատվածի համեմատությամբ բնարկվող բառարանում տրված են 100 փոխառյալ նոր բառեր:

2) Բառարանը արձանագրել է նաև այնպիսի նոր բառեր, որոնք կազմվել են՝ ա) Փոխառյալ ռուսերեն և հայերեն բառերից, ինչպես՝ ավիոգործարան, անթոլոգիոց, անթոսանակ և այլն: բ) Ռուսերեն բառերով և հայերեն ածանցներով, ինչպես՝ անիմիստական:

Քննարկվող բառարանի կարևոր արժանիքն այն է նաև, որ արձանագրել է ռուսերենի նմանությամբ կազմված բազմաթիվ հայկական բառեր, որոնց որոշ մասը հեղինակներն են կազմել:

«Ռուս-հայերեն նոր բառարանում» առաջին անգամ բառարանագրական մշակման են ենթարկվել այն բառերի և տերմինների մեծ մասը, որոնք ամփոփված էին ռուս-հայերեն ռազմական, իրավաբանական, աշխատանքային, երկաթուղային, շինարարական, բժշկական և այլ տերմինաբանական բառարաններում: Նախկինում կազմված անհաջող բառերի փոխարեն հեղինակները կազմել են նորերը: Ռուսերենի ընդօրինակությամբ կազմված բոլոր նորակազմ բառերի թիվը սույն բառարանում 5 հազարի է հասնում: Այդ բառերը բառարանագրական մշակման չեն ենթարկվել անգամ հետազոտում՝ Ստ. Մալխասյանյի բացատրական բառարանում: Վերահիշյալ նորակազմ բառերը, սովորաբար, ածանցումներ և բառաբարդություններ են կազմված հայերենի բառակազմության օրենքներով:

Նորակազմ բառերի մեջ կան նաև բռնազբոսիկ, անճաշակ, իմաստով և ձևով սխալ կազմած շատ բառեր: Բավական է հիշատակել իզական սեռ ցույց տվող ռուսերեն բառերի հայկական աղճատված համանշանակները. ինչպես՝ ուրուզուլնի (ուруженье) արդ արուլի (орда-ведница), լուրչուկի, լարուկի (лагушка), խանդավառուկի (эпизистка), գուլուրուկի

(КОЛОНИСТКА), դանդաղունի (медлительница), սպշունի (идиотка), մեռելունի (покойница) և այլն:

Բառարանի առաջաբանում տեսականորեն միանգամայն ճիշտ լինողով օտարաբանություն, գրաբարայնություն և գավառաբանություն անհամատեղությունը արդի հայերեն գրական լեզվի բառային կազմի հետ, հեղինակները գործնականում հաճախ իրենց ճիշտ սկզբունքները չեն կիրառում: Բառարանի հայկական մասում տեղ են գտել արևելյան մի շարք լեզուներից՝ արաբերենից, պարսկերենից, թուրքերենից հայ բարբառներին անցած այնպիսի բառեր, ինչպես՝ մարխոշ, օլիբազ, զիբիլ, սաղսալամար, դոշաղ, զեբիլ, յախա, յուղա, բարաղ, բաճզիվ, մաճաշառ, սֆար, բամբալու և այլն: Պետք է սակայն մատնանշել, որ բարբառային բառերը և թուրք-թաթարական փոխառությունները բառարանում՝ հեղինակների անձնական նախասիրությունների արդյունք չեն, այլ բառարանի կազմության ժամանակաշրջանին շատ բնորոշ երեւոյթ, երբ դեռ լիովին չէին կայունացել հայ գրական լեզվի բառային կազմի սահմանները: Նույն կերպ պետք է բացատրել նաև ուղղագրական հարցերում ևս նկատվող որոշ անմիօրինակություններ: Հիմնականում պահպանելով 1922 թ. հաստատված ուղղագրության նորմաները, փոխառյալ բառերի տառադարձության մեջ, սակայն, թույլ է տրվել միասնականության և միաբնականության խախտումներ:

Այսպիսով, «Թուս-հայերեն նոր բառարանը» ամփոփելով 30-ական թվականների ռուսաց և հայոց լեզուների բառապաշարը՝ այդ շրջանին հատուկ ելևէջներով, մի քայլ առաջ էր շարժվում: Բառարանի բառարանից: Այն խոշոր դեր է կատարել և այժմ էլ դեռևս չի կորցրել իր արժեքը, որպես գործնական և գիտական նշանակություն ունեցող ձեռնարկ: Իր այս ակնհայտ արժանիքներով հանդերձ հիշյալ բառարանը այլևս չէր կարող բավարարել մեր ժամանակների աճող պահանջներին: Վերջին տասնամյակների ընթացքում ռուսաց և հայոց լեզուների բառապաշարների մեջ կատարված փոփոխությունները և, առանձնապես, այդ լեզուների բառային կազմի կայունացումն ու նորմավորումը հրամայաբար պահանջում էին կազմել արդիական պահանջների համապատասխանող ավելի կատարյալ ռուս-հայերեն բառարան:

1954—1958 թթ. լույս է տեսնում ռուս-հայերեն բառահատոր բառարանը, որը կազմվել և խմբագրվել է Հայկական ՍՍՌ ԳԱ լեզվի ինստիտուտի կոլեկտիվի կողմից:

Բառարանը պարունակում է մոտ 100 հազար բառահոգված և ընդգրկում է ռուսերենի բառապաշարը Պուշկինի ժամանակաշրջանից մինչև մեր օրերը: Բառարանում մեծ տեղ է տրված նաև դարձվածաբանությանը, ինչպես ա) առարկաների և երևույթների բաղադրյալ անուններ (кислородное молоко), բ) բաղադրյալ տերմիններ (звёздная ассоциация), գ) բաղադրյալ նախդիրներ, շաղկապներ ու մակբայներ (между тем, потому что, на днях), դ) կայուն ասոցիություններ (двоячить до сведения), ե) իյրիմատիկ արտահայտություններ (рукой подать), զ) առածներ, ասացվածքներ և թևավոր արտահայտություններ (и пав, ни ворона, дьявола уха), է) արտահայտություններ անտիկ դիցաբանությունից (авгиева конюшня, ахиллесова пята) և այլն:

Հիմք ընդունելով Ուլաևի խմբագրությամբ լույս տեսած բառարանը, ռուս-հայերեն բառարանի հեղինակները վերջինիս մեջ կատարել են հետևյալ լրացումներն ու փոփոխությունները. ա) Ուլաևի բառարանային նյութը լրացվել է ինչպես բառերով, այնպես էլ դարձվածաբանությամբ. բ) ճշգրտվել են ոճական նշումները՝ նրանց ժամանակակից գործածության համաձայն. գ) բառերի շատ բացատրություններ ճշտվել և տրվել են գիտության արդի մակարդակին համապատասխան. դ) ուղղվել ու լրացվել, ինչպես նաև ճշտվել են ռուսերեն շատ բառերի շեշտադրությունը և ուղղագրությունը. ե) վերանայվել ու որոշ չափով թարմացվել է ցուցադրական նյութը:

Ի տարբերություն սովետական շրջանում լույս տեսած նախորդ բառարանների, սույն բառարանը ամենածավալուն է պարունակած բառերի քանակով, իմաստների և նրբերանգների բազմազանությամբ: Նախորդ «Թուս-հայերեն նոր բառարանի» համեմատությամբ, միայն շեշտադրված բառերի քանակը երկու և կես անգամ աճել է, շեշտով կազմվող բառերի

7 «Թուս-հայերեն բառարան», կազմողներ՝ Ծ. Տեր-Մինասյան, Վ. Փոթեյան, Մ. Գևորգյան, Հ. Համբարձումյան, խմբագիրներ՝ Ծ. Տեր-Մինասյան, Վ. Փոթեյան, Ի. Գևորգյան, գլխավոր խմբագրություն՝ Գ. Ղափանցյան, Ա. Ղարիբյան, Է. Աղայան, Ս. Ղաղարյան, Ռ. Մեղրումյան, Ա հատոր, 1954, Բ հատոր, 1955, Գ հատոր, 1956, Դ հատոր, 1958, Երևան:

8 «Թուս-հայերեն բառարան», Ա. հատոր, առաջաբան:

Քիչը 34-ից հասնւ է 122-ի, Եթէ նախորդ բառարանում ԿԻՊ-ով կազմվող միայն երկու բառ է ընդգրկված, кино, кинофильм, ապա սույն բառարանում այդ կարգի բառերի թիվը արդեն հասնում է 26-ի, радио-ով կազմվող բառերի թիվը 30-ից հասնւ է 76-ի, Բառարանում առաջին անգամ գրանցվել են լեզվում լայն գործածութիւնն ստացած այնպիսի բառեր, ինչպես՝ кинокартина, киномеханик, кинооператор, кинопередвижка, кинорежиссер, киносеть, киносценарий, киносъемка, кинотеатр, кинофикация և այլն. կամ радиоволна, радиовышка, радиозонд, радиола, радиолампа, радиолокация, радиособорудование, радиоперекличка, радиосеть, радиосигнал, радиослушатель, радиоточка, радиопузел և այլն:

Ռուս-հայերեն բառարանի ռուսական բառացանկը իր հարստությամբ գերազանցում է ոչ միայն սովետական շրջանում հրատարակված ռուսաց լեզվի բացատրական և ռուսերենից միայլ ազգային լեզվի թարգմանական ընդհանուր բառարանների բառացանկերից, այլև քառահատոր ռուսերեն քաղաքական վերոյի բառարանից¹⁰,

Վերոհիշյալ բառարանի համեմատությամբ միայն Ա տառի մի փոքր հատվածով տես-հայերեն բառարանը 70-ից ավելի բառեր է տեղադրել: Իկյ թվով այնպիսի բառեր, ինչպես, օրինակ՝ автоколонна, автообилиз ция, авторитарность, авторога, автопокрышка, автосани, автосмесь, автосообщение, автостроение, авточасти, автошина, агитбригада, агиткомпания, аграфия, агрегатчик, агромаксимум, агромелиорация, агроминимум, агропомощь, агропункт, агрорайон, агросеть, агроучасток, агрофизика, агрошкола և այլն:

Այս հատվածում հաշվի չլինի առնում ածականական և մակրայական ձևերով կազմված այն բառերը, որոնք չկան վերոհիշյալ բառարանում: Ռուսական բառացանկի այս ակնհայտ առավելությունների հետ անհրաժեշտ է նշել նաև թարգմանական՝ հայերական մասի և բառարանի այլ առավելությունների մասին:

ա) Բառարանի հայկական մասում հեղինակներն աշխատել են հրաժարվել արհեստական և կեղծ բառերից, որոնք կազմվել են տարբեր ժամանակներում, բայց լեզվի մեջ քաղաքացիության իրավունք ձեռք չեն բերել:

բ) Ռուսերեն բազմաթիվ նոր բառերին համապատասխան կազմվել և առաջին անգամ բառարանագրական մշակման են ենթարկվել հազարավոր հայերեն բառեր, որոնց որոշ մասն արդեն հաստատորեն մուտք է գործել հայոց լեզվի մեջ:

գ) (նզվի ազգային առանձնահատկությունների հետ առնչվող զանազան ոճերի, իդիոմների, առանձների և ասացվածքների թարգմանությունը կապված է հայտնի դժվարությունների հետ: Այդ խնդրում հեղինակներին օգնության և հասել հայ ժողովրդի կենդանի խոսքը: Նրանք առատորեն օգտագործել են ժողովրդական ոճերը, առանձներն ու ասացվածքները, որոնք հարուստացնում են ժամանակակից հայոց լեզուն:

դ) նախորդ նույնատիպ բառարանների համեմատությամբ հեղինակները սույն բառարանում աշխատել են խուսափել նեղ բարբառային քառերից և բարբառներից եկող արևելյան այն փոխառություններից, որոնց համարժեքները կան հայ գրական լեզվում:

բ) Որոշ աշխատանքներ են կատարվել նաև Հայերենի ուղղագրության վիճելի հարցերի կարգավորման՝ հատկապես փոխառյալ բառերի հայերեն տառադարձության ուղղությանմբ:

Քառարանը գերծ չէ նաև մասնավորև սկզբունքային հարցերին վերաբերող թերություններին, որոնցից շատերը զրախոսներն արդեն ժամանակին մատենաչէ են: Քառարանի թերությունների մասին անհրաժեշտ է անել մի երկու դիտողություն:

ա) Ինչպես բառարանի առաջարկում նշվում է, հեղինակներն իրենց առաջ նպատակ են դրել կազմել երկկեզվյալ նոր տիպի, այսպես կոչված, թարգմանա-բացատրական բառարան: Ներ կարծիքով թարգմանվող բառերի բացատրության անհրաժեշտությունը չէր կարող զգացվել, եթե ռուսերեն բառերի դիմաց սույուր դեպքերում տրվեր հայերեն համանշանակը: Բառերի բացատրությանն էլ հեղինակները դիմել են այն դեպքերում, երբ ռուսերեն բառը ոչ թե թարգմանվել, այլ տառադարձվել է հայերեն:

բ) Սույն բառարանում ուսեմբերն բառերի նկարադրական թարգմանությունից խուսափելու ուղղությամբ նախդրդ բառարանների համեմատությամբ որոշ առաջադիմություն զգացվում է, քայք, դժբախտաբար, պետք է նշել, որ այդ դժվարությունը բառարանի հեղինակները գեուես լիովին չեն կարողացել հաղթահարել:

Г. Мадоян, Первый том русско-армянского словаря. „Коммунист“. 6, V, 1955.

¹⁰ «Словарь русского языка», в четырех томах, 1 том, Москва, 1957.

դ) Բառարանի հեղինակները հայ տերմինաբանության միօրինակության և կարգավորման շահերից չեն ելել, երբ տերմինների թարգմանությունը որոշ դեպքերում տվել են երկու և ավելի հոմանիշներով, որոնք կարող են շփոթություն առաջացնել հայ տեխնաբանության մեջ:

դ) Մեր կարծիքով վիճելի կտրելի է համարել նաև թարգմանական՝ երկլեզվյան բառարաններում թարգմանվող բառի իմաստը կամ իմաստները հաստատող բնագրային օրինակների առկայությունը, որոնք առատորեն բերվել և թարգմանվել են սույն բառարանում:

ե) Բառարանում շատ է նաև հայերեն տառադարձությամբ տրված օտար բառերի քանակը: Այդ կարգի բառեր բերվել են սնգամ սյն դեպքերում, երբ նրանց հայերեն համասյատասխանությունները կան և հարողությամբ ծառայում են լեզվին. օրինակ՝ телевизор—տելեվիզոր, консервы—պահածոներ, կոնսերվներ, полис—պոլիս, ապահովագիր, рецензия—ռեցենզիա, գրախուսական, գրախոսություն, рефрен—կրկներգ, ռեֆրեն, рефюз—ռեֆյուս, անցահարթակ, телеавтограф—տելեավտոգրաֆ, հեռախոսագիր, ИЛХХ—շլյախ, ուղի, ճանապարհ և այլն:

զ) Հետևելով բացատրական բառարանների կազմության սկզբունքներին և այն կիրառելով թարգմանական սույն բառարանում, հեղինակները ծանրաբեռնել են բառարանի բառահոգվածը: Այն բոլոր դեպքերում, երբ ռուսերեն բառի տարբեր իմաստները համապատասխանաբար արտահայտվում են հայերեն միևնույն բառով, հայերեն համանշանակ բառը մեկ անգամ բերվելու փոխարեն, տվյալ բառահոգվածում հայերեն բառը կրկնվում է այնքան անգամ, որքան համապատասխան իմաստներ և նույնիսկ իմաստային նրբերանգներ ունի ռուսերեն գլխաբառը. օրինակ՝ театр—1. թատրոն, թատերական արվեստ: 3. թատրոն, թատրոնի շենք: Թատրոն, թատերական հիմնարկություն: 5. թատերական երկերի մամուլություն, թատրոն և այլն:

Այսպիսով, իր ակնհայտ առավելություններով և նշված թերություններով հանդերձ ռուս-հայերեն բառահատոր բառարանի հրատարակությունը արժեքավոր ներդրում է հայ-ռուսերեն բառարանագրության մօջ և խոշոր իրադարձություն հայ ժողովրդի կուլտուրական կյանքում:

2. Ռուս-հայերեն և հայ-ռուսերեն փոխառնակալ բառաբաններ

Փոքրածավալ երկլեզվյան բառարանների առանձնահատկությունը բնորոշվում է երկու պայմանով՝ բառային նյութի սահմանափակությամբ և բառի բառարանագրական հակիրճ կամ ոչ լրիվ մշակմամբ: Այդ ծավալի երկլեզվյան բառարանը պետք է արտահայտի գեղարվեստական հանրամատչելի գրականության, հասարակական-քաղաքական տեքստերի, պարբերական սամուլի ընթերցումն ու թարգմանությունը:

ա. Ռուս-հայերեն բառաբան

Հրապարակի վրա ունենալով 30 հազար բառ պարունակող Ռուս-հայերեն նոր բառարանը և 10 հազար բառերի սահմաններում երկու դպրոցական բառարանները, Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի լեզվի ինստիտուտը 1945 թ. հրատարակում է Ռուս-հայերեն բառարանը, որ պարունակում է բանավոր խոսքի և գրականության մեջ ամենից հաճախ գործածվող 28 հազար բառ, Բառերի քանակով հիշյալ բառարանը գրավում է ընդարձակ և դպրոցական (համառոտ) բառարանների միջին տեղը: Ինչպես առաջաբանից երևում է, բառարանի հեղինակները աշխատել են ներկայացնել ժամանակակից ռուսերենի բառապաշարը, այն քանակով, որով հնարավոր լինի կարգալ ու թարգմանել հասարակական-քաղաքական և հանրամատչելի գիտական և գեղարվեստական գրականություն: Փոքրածավալ բառարանը պետք է ընդգրկի այնպիսի բառեր, որոնք արտահայտում են լեզվի զարգացման տվյալ էտապում տեղի ունեցող փոփոխությունները: Իսկապես սույն բառարանը արտահայտում է ռուսաց և հայոց լեզուների բառային կազմի 40-ական թվականների վիճակը: Ռուսական բառացանկի առավելությունն այն է, որ նրանում հիմնականում ամփոփվել են 19-ական թվականների ռուսաց լեզվի բնորոշ բառապաշարը, ինչպես նաև բառապաշարային այն փոփոխությունները, որ կատարվել էին սովետական շրջանի 25 տարիների ընթացքում: Բառարանի արժեքներից է նաև հասարակական-քաղաքական և գիտատեխնիկական տերմինների ընտրությունն ու տեղադրումը ռուսական բառացանկում:

¹¹ Ռուս-հայերեն բառարան, կազմեցին և խմբագրեցին դոկտոր-պրոֆ. Ա. Ղարիբյան, դոկտոր-պրոֆ. Ծ. Տեր-Մինասյան, Մ. Գևորգյան, Երևան, 1945:

Վերահիշյալ արժանիքներով հանդերձ ռուսական բառացանկը զերծ չէ նաև թերու-թյուններից: Բառարանում տեղ չեն գտել լեզվի զարգացման տվյալ փուլի համար այնպիսի հարևոր բառեր, ինչպես՝ брэмбужка, воскресник, выпускник, скоросник, боеприп с, дегазация, джкер, лесонасаждение, демилитаризация և այլն:

Այնինչ բառարանում տեղ են գտել այնպիսի բառեր, որոնք մեր կարծիքով ավելորդ են ինչպես օրինակ՝ ассенизация, ассенизационный, ассенизатор, бэйрам, шайтан, кельпер, пепеховцы, продуполномоченный, цейгауз, штейгер և այլն:

Բառարանը, մեր կարծիքով, անտեղի կերպով ծանրաբեռնված է նաև աշխարհագրական անուններով, որոնք չպետք է տեղ գրավեն ոչ միայն այս, այլ նույնիսկ ռուս-հայերեն ժեռ բառարաններում. ինչպես օրինակ՝ Австралия, Австралийское море, Анкира, Аракс, Ара-рат, Кахетия, նույնիսկ ասական ձևով Якутский և այլն:

Սույն տիպի բառարանում պետք է տեղ գտնեն մասնագիտական այն տերմինները, որոնք յուրացվել են լեզվի կողմից որպես ընդհանուր բառեր և դադարել են միայն մասնագիտական լինելուց:

Դարձվածաբանությունը համեմատաբար քիչ տեղ է գրավում, որը բացատրվում է բառարանի ծավալով և պրոֆիլով: Դարձվածաբանության բաժնում առանձնապես բառաքանը հարուստ է բաղադրյալ տերմիններով, ինչպես օր.՝ аренда, плата, багажный вагон, безналичный расчет, бесспорочное животное, пригласительный биле և այլն:

Բառարանի ծավալին համապատասխան տրված են նաև իդիոմատիկ արտահայտու-թյուններ, ինչպես օր.՝ ногэ բառի տակ տրված են՝ сбить с ног (վայր զլուրել, տապալել), бить на короткой ноге (մոտիկ լինել, մոտելիմ լինել), протянуть ноги (ոտքերը մեկնել, մեկնել), встать с левой ноги (վառ տրամադրությամբ վեր կենալ), жить на широкую ногу (լայն ու վարքով ապրել, едти в ногу (համադրյալ ընթանալ) և այլն:

Մեր կարծիքով զարգացածաբանության մեջ միանգամայն անտեղի կերպով տեղադրվել են ազատ ձևով կազմած նախադասությունները. ինչպես՝ Он остановился в гостинице. Тучи обложили небо (էջ 204). Неудачи его обескуражили (էջ 256). Я порезал себе палец (էջ 305) և այլն:

Բառարանի հայկական մասի հիմնական արժանիքն այն է, որ հեղինակները առաջնորդվե-լով բառի դիմաց բառ տալու սկզբունքով, խուսափել են զանազան բացատրություններից և պարզաբանումներից:

Բառարանում մուտք են գործել նաև 40-ական թվականներին հայոց լեզվի բառապաշարի մեջ մտած նորակազմ շատ բառեր: Ակնհայտ է սակայն, որ հեղինակները ավելի շուտ ընտրու-թյուն են կատարել երկհատորանոց «Ռուս-հայերեն նոր բառարանի» նորակազմ բառերի մե-թան թե ժողովել են նորերը գեղարվեստական գրականությունից և պարբերական մամուլից:

Հայերեն մասի թերություններից առաջին հերթին պետք է նշել այն, որ բառարանում դեռ-ևս տեղ են գտել բաղադրացիության իրավունք չստացած այնպիսի բառեր, որոնք վաղուց են մերժվել լեզվի կողմից. օրինակ՝ պատեհապաշտ (օպորտունիստ), պատեհապաշտություն (օպա-ռունիզմ), ռամկավար (դեմոկրատ), ռամկավարություն (դեմոկրատիա), մեծավարպետ (գրաս-մայստեր), համախաղ (անսամբլ), անկարգել (պարաշուտ) և այլն:

Բառարանում երբեմն տուրք է տրվում նաև հայկական բառերի հին իմաստներին, ինչպես՝ атлет—ատլետ, рմрիշ, այնինչ ըմբիշ այժմ համարվում է ռուսական ճորձ բառի համանշա-նակը, կամ послание—բուլղր, գրություն, նամակ, աչքաթող է ասվել այժմ գործածական ուղեքն բառը, урна բառի տակ մոռացվել է հայերեն Բվեստովի իմաստը և այլն: Фонема բառը օխալ կերպով թարգմանվել է ձևույթ (հնչույթի փոխարեն), որը հետագայում մուտք է գործել հայ-ռուսերեն բառարանի երկու հրատարակություններում:

Բառարանում տեղ են գտել նաև որոշ թվով օտարաբանություններ: Մեր կարծիքով հայկա-կան մասում հեղինակները իզուր են տեղավորել՝ աղբես, աուտաճում, բալկոն, դիալեկտ, վելոսիպեդ, կլոուն, մագիստրալ, պանիկա, պիլոտ, սամավար, ֆակտ և այլ բառերը, երբ սրտնց հայկական համարժեքները՝ հասցե, աստղաբաշխ, պատշգամբ, բարբառ, հեծանիվ, ծաղրածու, վիմոս, խեղդատակ, մայրուղի, խուճապ, օղաշու, սավառնեղ, ինճանեռ, հեշտանեռ, փառտ և այլ բառերը ավելի հարողությունամբ են ծառայում հայոց լեզվին:

Միանգամայն անտեղի են բառարանում տեղ գտել հայերեն բարբառներից եկող արևելյան փոխառությունները, ինչպես՝ բազար, դալլա, դալմադալ, Բրբալ, Բյալա, Բյաբ, սիլա, մեյ-մուլ, շաբուլ, օյնիբազ և այլն, որոնք աղտոտում են ժամանակակից հայոց լեզուն:

Հիշյալ առավելություններով և թերություններով հանդերձ՝ բառարանը հիմնականում ամ-հեղեկագիր 12—4

փոփոխում է իր մեջ ռուսաց և հայոց լեզուների ժամանակակից բառապաշարը և նույնաժամանակով՝ ավելի կատարյալ բառարանի բացակայության պայմաններում իր արժեքը դեռ չի կորցրել:

բ) Հայ-ռուսերեն բառարան¹²

Սույն բառարանը իր ծավալով նախասովորական շրջանում հրատարակված Հ. Բազադյանի մեծածավալ և Հ. Թումանյանի¹³ համառոտ հայ-ռուսերեն բառարանների միջին տեղն է գրավում և ավելի մոտենում է Կ. Յաղոբյանի «Հայերեն-ռուսերեն բառարանին»¹⁴։ Որի բառերի քանակը նույնպես հասնում է 30 հազարի։ Լույս տեսնելով նույնատիպ վերջին բառարաններից 30—35 տարի հետո, հայ-ռուսերեն բառարանը 28 հազար բառի սահմաններում աշխատել է ներկայացնել հայոց լեզվի գործածական բառապաշարը։ Բառարանի ծավալը փոքրացնելու համար հեղինակները համառոտել են բառամթերքը, սահմանափակել հոմանիշների քանակը, կրճատել մասնագիտական սերմինաբանությունը։ Հայերեն բառացանկի առավելությունն այն է, որ նրանում առաջին անգամ մուտք են գործել նոր բառեր, որոնք հետևանք են այն փոփոխությունների, որ տեղի էին ունեցել հայոց լեզվի բառային կազմում վերջին 30 տարիների ընթացքում։ Հիշյալ նորամուտ բառերը կարելի է դասակարգել երեք խմբի։

ա) Ռուսերենի միջոցով կատարված փոխառություններ, որոնք գլխավորապես հասարակական-քաղաքական և գիտության ու տեխնիկայի տարբեր ճյուղերին վերաբերող բառեր ու տերմիններ են։

Բառարանի միայն առաջին էջում այդ կարգի բառերից կարելի է հիշատակել՝ ազիտացիա, ազիտատուր, ագրեզատ, ագրեսիա, ագրեսոր, ագրիկուլտուրա, ագրոբազա, ագրոնոմ, ագրոնոմիա, աերոդինամիկա և այլն։

բ) Հայկական բառացանկում տեղ են գտել այնպիսի բառեր, որոնք կազմված են ռուսերեն փոխառյալ բառերից և հայերեն բաղադրիչներից, ինչպես՝ տեռուսինան, ավիակիր, ավիագործարան, զագամուղ, զագաշարժիչ, կալոռիաշափ և այլն։

գ) Հայկական բառացանկում տրվել են նաև հայոց լեզվի բառակազմական օրենքներով կազմված նոր բառերը։ Նորակազմ բառերի այն մեծ զանգվածը, որ առաջին անգամ է տեղ գտնում հայ-ռուսերեն բառարանում, որոշ չափով արտահայտում է հայոց լեզվի բառային կազմում կատարված փոփոխությունները։

Բառարանի հայկական բառացանկը, սակայն, զերծ չէ նաև թերություններից։ Յուրաքանչյուր երկլեզվյան բառարան պետք է արտահայտի լեզվի տվյալ էտապի բառապաշարը և պետք է կատարի լեզվի նորմավորողի դեր։ Հիշյալ բառարանն էլ, որպես 40-ական թվականների հայոց լեզվի հայելին, իր բառացանկում չպետք է տեղ տար բարբառային և օտարազգի այնպիսի բառերի, ինչպես օրինակ՝ բալիա, բալիչ, բաղ, բոյ, գյուլլա, դավթար, դոշ, դուֆանդար, զսրգար, ճայաթ, յարու, յախա, յաման, յարա, դոշաղ, նաղդ, նիսիա, նարդիվան, չոլ, վաբան և այլն։ Ինչով են վատ սեփական բարձ. այգի, ճասակ, գնդակ և այլն բառերը բալիչ, բաղ, բոյ, գյուլլա բառերից։

Բարբառային հաջորդ կարգի բառերը, որոնք բոլորովին անտեղի մուտք են գործել բառարանի հայկական բառացանկում, արարատյան բարբառից եկող բառաձևերն են. ինչպես՝ էրենել, էգուց, էդ, էդպես, էդքան, էծ, էշակ, էս, էսքան, էրենկ, կեկտիք և այլն։ Հայկական բառացանկում տեղ են գտել նաև ռուս-հայերեն բառարանի հայկական բաժնում տեղ գտած արհեստական, շինծու բառեր, ինչպես՝ հեծելուհի (ВСАДНИЦА), կոմպանիոնուհի (КОМПАНИОНКА) և այլն, որպես հետևանք ռուս-հայերեն բառարանի շրջման։ Վերոհիշյալ կարգի թերություններից խուսափելու համար, ռուս-հայերեն և հայ-ռուսերեն բառարանների բառացանկերը պետք է կազմվեն առանձին, իրարից անկախ՝ հիմք ընդունելով թարգմանվող լեզվի վերջին շրջանի գործածական բառապաշարը։ Ի վերջո պետք է նշել, որ ինչպես այս, այնպես էլ նախորդ բառարանի խոշոր թերություններից է նաև քերականական և ոճական նշումների բացակայությունը։

1960 թ. երկրորդ լրացված հրատարակությամբ լույս տեսավ նույն հեղինակների վերահիշյալ բառարանը¹⁵, որ պարունակում է բանավոր խոսքի և գրականության մեջ գործածվող շուրջ 40 հազար բառ։

¹² «Հայ-ռուսերեն բառարան», կազմեցին և խմբագրեցին դոկտոր-պրոֆ. Ա. Ղարիբյան, դոկտոր-պրոֆ. Ե. Տեր-Մինասյան, Մ. Գևորգյան, Երևան, 1947։

¹³ Հ. Թումանյան, Հայ-ռուսերեն բառարան, Թիֆլիս, 1910։

¹⁴ Կ. Յաղոբյան, Հայ-ռուսերեն բառարան, Թիֆլիս, 1891։

¹⁵ «Հայ-ռուսերեն բառարան», երկրորդ լրացրած հրատարակություն, կազմեցին և խմբագրեցին՝ պրոֆ. Ա. Ս. Ղարիբյան, պրոֆ. Ե. Գ. Տեր-Մինասյան, Մ. Ա. Գևորգյան, Երևան, 1960։

Նախապես պետք է ասել, որ սույն բառարանը մամուլում խիստ քննադատության ենթարկվեց¹⁰, իրավացիորեն նշվեց, որ բառարանի երկրորդ հրատարակության հայերեն բառացանկի ավելացված մասը փաստորեն աճել է ի հաշիվ՝

ա. գիտության, տեխնիկայի, արտադրության տարբեր բնագավառներին վերաբերող մասնագիտական այնպիսի տերմինների ու բառերի, որոնք չպետք է տեղ գրավեն այս ծավալի ընդհանուր բառարանում.

բ. օտարազգի այն բառերի, որոնց հայերեն համանշանակները հաջողությամբ ծառայում են հայոց լեզվին.

գ. տարբեր ժամանակներում այս կամ այն հեղինակների կողմից, ինչպես նաև ռուս-հայերեն բառարաններում ռուսերեն բառերի համար կազմված բազմաթիվ բառերի, որոնց մեծ մասը լեզվում քաղաքացիության իրավունք ձևոք չի բերել.

դ. բարբառային բառերի ու բառաձևերի և այլն:

Որպես արդի հայերենի գործածական բառեր հեղինակները հրամցում են տարբեր բնագավառների և մասնագիտությունների հասկանալի և մեծ մասամբ անհասկանալի օտարազգի այնպիսի բառեր, ինչպես՝ անտրեպրենյոր, ավրալ, բալազան և բեշմետ, աֆերիստ, էկլոգա, էսկուլապ, էմբրիտուրա, էվդեմոնիզմ, ապա՝ ժոլներ և ժոնգլյոր, այնուհետև՝ ինժեներ, ենգ-բեդինետ և ինսուրգենտ, լանդսկենխտ, լանդտագ, լանկորդ և 2 անգամ լանդշաֆտ, այս բոլորին եթե ավելացնենք՝ կարելտով, կամյոն, կանյոն, կակադու, կեկուոկ, կրեատուրա, կոնտոնյոր և հազարավոր այս կարգի բառեր, ապա պատկերը լրիվ կլինի Այս ֆոնի վրա շեն փայլում են և հայերեն կամ հայացված բառերը: Այն տպավորությունն է ստեղծվում, որ հեղինակները փաստորեն ընտրություն չեն կատարել հայերենի գործածական և անգործածական բառերի մեջ. ինչպես՝ բեշկմշկո, առաքաստագործ, թանգարանագետ, պապիրոսարանություն, պապիրոսագիտություն և այլն. չեն տարբերել բառարանագրական արժեք ունեցող բառերը լեզվում գոյություն ունեցող կամ հեշտությամբ կազմվող այնպիսի բառերից, ինչպես՝ ամենահասարակ, ամենամանր, ամենացածր, ամենափոքր. կամ՝ անգնդակ, անդանակ, անձի, անհայրենադարձ և այլն:

Հայերեն բառացանկում բառի ուղիղ ձևի փոխարեն տեղ են գտել հայերենի ենթակայական դերբայները, ինչպես՝ այրող, բարձրացող, թագավորող, թափանցող, խաղաղացնող և այլն, հարակատար դերբայները՝ անարգված, անբավարարված, աշխուժացած, անվանված և այլն: Չեն մոռացվել անգամ պատմության մեջ հայտնի և անհայտ ժողովուրդները, իրենց արական և իգական սեռի ներկայացուցիչներով, ինչպես՝ էվենկ, թավլիներ, խանտեր, լոպար և լոպարուհի, խոզարներ և խոզարուհի, իմերել և իմերելուհի, թեքուհի և այլն:

Ակնհայտ է, որ հեղինակները հիմք ընդունելով իրենց իսկ կազմած ռուս-հայերեն բառարանի շրջած բառացանկը, հայերեն բառացանկի մեջ առանց քննադատական վերաբերմունքի ընդունել և տեղավորել են անճշակ, կեղծ և շինծու բազմաթիվ բառեր, որոնք տեղի և անտեղի կազմվել են որպես թարգմանություն՝ ռուս-հայերեն բառարանի ռուսերեն բառերի, ինչպես՝ թաղթաղիր և թաղթաղանոց, թռչնաբարձունք և ժամիշխսն, կամ գայլուկաբույծ, գայլուկաբուծություն, գայլուկաբուծական, գայլուկանոց, ածիկագործարան, ածիկանոց, ածիկարան, ածիկացնել, ածիկացում, ածիկանալ, ածկանալ և այլն: Բառացանկում շատ հաճախ ենք հանդիպում ուհի-ով վերջացող իգական սեռ ցույց սովոր հայերեն անսովոր բառերի, ինչպես ախուլանուհի, գզրարուհի, դյութուհի, դուզենկերուհի, էգոիստուհի, ծխականուհի, թեկնածուհի. կախեթուհի և այլն:

Բառարանի ընդհանուր պատկերը ամբողջացնելու համառ կառնելի է բերել նաև անհաջող կամ սխալ թարգմանության մի երկու օրինակ. դատ անել տրված է երկու անգամ և երկու տարբեր թարգմանությամբ. մի դեպքում՝ «ИМНТЬ СУД, մյուս դեպքում՝ ТВОРИТЬ СУД. այգեքաղ թարգմանվել է заковка сада, պետք է լինի виноградника ապաղասակաբային—внеклассовый. բեռորդի (բորջ որդի) թարգմանվել է որպես բեռու որդի—сын брата матери. Ավելորդ չէ նշել, որ բառարանում որոշ դեպքերում անտեսվել են անգամ հայերենի ուղղագրության և տառադարձության հանրահայտ կանոնները. կարդում էնք՝ Կազախստան, խլորոֆիլ, արխիպելագ և այլն:

¹⁰ Տե՛ս Պ ա Ր Ո Ւ Յ Ր Ս Կ ա կ, Բաց նամակ «...բառարան»-ը կազմողներին, «Գրական թերթ», № 6, 1961, Գ ու Ր գ ե ն Ս Կ ա կ, Հայ-ռուսերեն նոր բառարանը և մեր բառարանագրության վիճակը, «Գրական թերթ», № 5, 1961:

Այսպիսով, հայերեն բառացանկի ընտրության, բառահոգվածի կազմության և թարգմանության աղաղակող թերությունների պատճառով հայ-ռուսերեն բառարանի սույն հրատարակությունը ոչ միայն չի նպաստում հայերենի նորմավորմանը, այլև իր կազմության սկզբունքներով չի բավարարում բառարանագրության գիտական պահանջներին:

3. Ռուս-հայերեն դպրոցական (համառոտ) բառարաններ:

Հայ բառարանագրության մեջ դպրոցական կոչվող բառարանները գիտական և մանկավարժական սկզբունքներով մշակված չլինելով՝ հետև ևս իրենց կոչումից, Սովորաբար դպրոցական բառարանները կազմվել են առանց որոշակի մեթոդական և մանկավարժական սկզբունքների, ընդհանուր երկկլկվյալ բառարանը էրճատելու եղանակով. բառացանկը հասցնելով մոտ 10 հազար բառի, մեր բառարանագիրները այդ տիպի բառարանները մատուցել են որպես դպրոցական բառարաններ:

ա) Ռուս-հայերեն համառոտ բառարան¹⁷

Առաջարանի համաձայն՝ բառարանում զետեղված են խոսակցական լեզվի և գրականության, ինչպես նաև քաղաքական, գիտության և տեխնիկայի բառերը: Ձեռնդեղով շուրջ 10 հազար բառ, կազմողները փաստորեն չեն ղեկավարվել մեթոդական լուրջ սկզբունքներով: Հեղինակները հիմնականում կրճատել են ռուս-հայերեն իսխորդ բառարանների շառացանկը, հասցնելով այն մինչև 10 հազարի, որակելով դրանք որպես ռուսերենի բառային կազմի ամենալավ բառեր: Սույն բառարանի ռուսական բառացանկը համեմատելով 1907 թ. լույս տեսած Հ. Խումանյանի նույնատիպ և նույնածավալ բառարանի հետ, պարզվում է, որ նոր բառարանում հեղինակները տեղավորել են որոշ թվով նոր բառեր, մասնավորապես սովետական շրջանում հայտնի չէին նորագույն հապավումներ. միաժամանակ անտեսել են անպակաս բառեր, որոնք կապված են հին կարգերի, կենցաղի, գաղափարախոսության, քաղաքականության և կրոնի հետ: Այնուհանդերձ, միայն Ա տառի տակ չկան դպրոցականի համար կարևոր այնպիսի բառեր, ինչպես՝ формизм, атрибут, антропология, антик, ангаректика, аллегория, аксиома, авантюра և այլն, որոնք կան ի. Խումանյանի բառարանում: Դպրոցականին անհրաժեշտ հիշյալ բառերի փոխարեն բառարանում հանդիպում ենք ոչ կարևոր բառերի ու տերմինների, ինչպես՝ айсор, акушерка, браунинг, вагранка, вагнерпас, мочиться, нагурщик, трепальщик, трепальное отделение, шанкеный иис руженг կամ Азнефть, Грознефть, Манфак, разпрос, совторгфлот, Экосо (Экономическое совещание) և այլն: Բառարանում համարյա անտեսված են բառին տրվող քերականական նշումները, որոնք չափազանց կարևոր են դպրոցական բառարանների համար: Ռուսական բառացանկի համեմատությամբ առավել անմխիթար է բառարանի հայկական մասի վիճակը: Այդ տիպի բառարանին պետք է խորթ լինեն բոլոր խրթին և գրաբարյան մեռած բառերը, օտար և մասնավորապես արևելյան փոխառությունները, գոհհիլ և աննշանակ բարբառային բառերն ու ձևերը, հայերեն բոլոր անհաշող բառերը, որոնք լեզվում մուտք չեն գործել, բայց բառարանագիրների կողմից համառոտ են տեղափոխվում ևս բառարանից բառարան: Որպես հայերեն բառեր հեղինակները աշակերտներին մատուցում են՝ ակկուրատ, վտուգ, գարչիցա, գուղոկ, դիստանցիա, գավոդ, գալ, ինստուկտոր, ինսպեկտոր, կոմպաս, պլաշչ, ռակետ և այլն: Բարբառներից եկող արևելյան այնպիսի փոխառություններ, որոնք խորթ են գրական լեզվին, ինչպես՝ խո, խով, հալաթ, դամիշ, չիրգիւ (գրպանահատ), բյուրիբար և այլն: Բառարանում նկատվում են նաև ռուսերեն բառերի թարգմանության բառային համանշանակների փոխարեն՝ բացասություններ կամ նկարագրություններ:

Բառարանը սկզբունքային լուրջ սխալների պատճառով երկար չէր կարող մնալ գործածության մեջ:

¹⁷ Ռուս-հայերեն համառոտ բառարան, թույլատրված է ՀՍԽՀ Լուսժողովմատի կողմից դպրոցներում օգտագործելու համար. կազմեցին՝ Մ. Կարաբեղիշյան, Ա. Սարատիկյան և Մ. Մխիթարյան, Երևան, 1934:

բ) Ռուս-հայերեն դպրոցապետ Բառարան 18

Ինչպես բոլոր հայերեն դպրոցական բառարանների, այնպես էլ այս բառարանի ուսուական բառացանկը զերծ չէ այն թերություններից ինչ որ նախորդող Բառացանկը ընտրելիս՝ հեղինակն՝ որ պետք է հիմք ընդունելին դպրոցական ծրագրերով նախատեսված այն դրականությունը, որ անհրաժեշտ է դպրոցական և արտագրոցական ուսուցման համար։ Նույնատիպ նախորդ բառարանների համեմատությամբ, սակայն, նա ունի այն ակնհայտ առավելությունը, որ ուսական բառերին տալիս է քերականական նշումներ։ Բառարանի հայկական բաժինը զերծ չէ խոշոր թերություններից։ Հեղինակները հայ գրական լեզվի փոխարեն աշակերտին մատուցել են բարձրագույն և օտար բառերով ողողված մի լեզու։ Այլ փաստը քաջ դիտա՛յցվուի, հեղինակները իրենց արդարացնելու համար մեղադրանքը բարդում են հայ գրական լեզվի վրա (առաջաբան, էջ 7)։ Հայ գրական լեզուն է մեղավոր, որ հեղինակները՝ պատուվակ, եղջյուր, նակնդեղ, աւարյակ, տռեխ, պայտ, գոտի և այլ գրական բառերի կողքին դնում են՝ Վուհանա, կոտոշ, տակ, օարեկ, շարուխ, նալ, Բամար բարբառային բառերը։ Մեղօ ուհ՛ աղոյթք հայ գրական լեզուն, երբ համապատասխան հայերեն բառերի առկայության պայմաններում հեղինակն՝ ք մատուցում են՝ ավտոդիտետ, արխիտեկտուր, արխիտեկտուրա, գրադոգ, ցիբկ, շոբք, շայնիկ, շաշկա, չին, շին, չոլիկա, շուր, օստանովա, օրլիգացիա, օրլոմ, ռեմոնտ, կոմոնո, կրեյսեր, պենսիա, պիւրամիդ, պոկրիշկա և այլ բառեր։ Հեղինակները երբեմն տարվում են հոմանիշներով, րայց, դժբախտաբար, աշխարհը նա անում հայերեն համանշանակը, օրինակ՝ заповедей բառով մանկված է կարմրացուլի, շողի, ցուլի, չկա՛ հրացուլի, կամ ссуда թարգմանված է փոխառվույուն, փոխ, բայց չկա՛ վարկ, որը և այժմ ընդունված է գործածական է։

Դարձվածաբանության տակ հեղինակները փաստորեն տեղ են տվել աղատ ձևով կազմած շատ նախադասությունների, չնչին տեղ հասկացնելով կայուն բառակապակցություններին՝ և իդիոմատիկ արտահայտություններին։ Ամենատարրիկաբար դպրոցական նույն բառարանում դարձվածաբանության հայերեն թարգմանությանն է։ Բառարանի առաջաբանում կարդում ենք. «Ֆյազնների հայերեն թարգմանության մեջ ըստ հնարավորության պահպանված է ռուսերենի շարդասությունը, այդ արված է նրա համար, որ հեղու լինի գտնել ռուսերենին համարժեք հայերեն բառը» (էջ 7)։ Դպրոցական բառարանում կարդում ենք՝ «ես հուշարձան կանգնեցի ինձ անձեռակերտ» (էջ 295), Ով ապրում է առանց թախժի ու զայրույթի, նա չի սիրում հայրենիք իր (էջ 175)։ Տրակտորիստներն ամբացա՝ տրակտորներին մինչև ցանքի վերջը (էջ 100)։

Բառարանը ողողված է բազմաթիվ նկատված և չնկատված վրիպակներով, որոնք խիստ կերպով դժվարացնում են բառարանից օգտվելու Այսպիսով, սույն բառարանը նույնպես, ինչպես և նախորդը, չհաղթահարելով իր առջև դրված խնդիրները, փաստորեն չի հասնել իր նպատակին:

Գ. Ռուս-հայերեն բառարան (միջնակարգ դպրոցի համար) 19.

Քինարկված նախորդ դպրոցական բառարանների համեմատությամբ սույն բառարանը
 ածական է մի շարք առավելություններով.

ա) Վերջինը լինելով՝ նա իր մեջ ամփոփել է ուսանելն և հայերեն բառերի ավելի կայունացած զանգվածը, ուղղագրական և շեշտադրության կայունացած ձևերով:

բ) Հեղինակները հաշվի են առել նախորդ նույնատիպ բառարանների հասցեին արված քննադատական գիտողությունները և աշխատել են բառարանը զերծ պահել նշված թերություններից:

գ) Կազմողները միանգամայն ճիշտ են վարվել, երբ դառնվածաբանությունն րաժնից հանել են ազատ ձևով կազմած նախադասություններով:

դ) Անհամեմատ ավելի հարթ է բառարանի թարգմանական՝ հայերեն մասը, որը հետևանք է նախ՝ հայերենի նորմաների կայունացման, ինչպես նաև այն բանի, որ հայկական բաժնի համար բառերի լայն ընտրությունն անսպառ աղբյուր է ծառայել ուսու-հայերեն քառահատոր բառարանը:

18 «Բուս-հայերեն դպրոցական բառարան», ոչ լրիվ միջնակարգ և միջնակարգ դպրոցի համար (մոտ 12 հազար բառ). հաստատված է Հայկական ՍՍՌ Լուսժողովմատի կողմից, Նրևան, 1941,

¹⁹ Ռ. Մ ե լ թ ռ յ ա ն, Տ. Կ. Կ ա ռ ա պ ե տ յ ա ն, Ռուս-Հայերեն բառարան, միջնակարգ դպրոցի համար (շուրջ 10 հազար բառ), հավանություն է տրվել Հայկական ՍՍՌ Նոսավորության մեխանիզմի կողմից, Հայպետոսմանկհրատ, 1958/59:

բ) Բավական հաջող է տրված նաև ուսուցանողի բառերի քերականական մշակումը, որը մեծապես կարող է օգնել բառարանից օգտվողներին:

գ) Հաջող է կատարված նաև դարձվածաբանության ընտրությունը: Վերահիշյալ ականհայառաձևությունները նշելուց հետո, այնուամենայնիվ լուրջ դիտողություններ կարելի է անել ուսական բառացանկի վերաբերյալ:

Ուսական բառացանկի քննությունը ցույց է տալիս, որ բառացանկի կազմության մեջ բացակայում է կայուն սկզբունքը: Այդի է զարնում այն փաստը, որ մեծ մասամբ գոյականները տալու փոխարեն՝ տրված են ուսական բառերի ածական ձևերը: օրինակ՝ տրված են капиталистический, кровопролитный, машиностроительный, метеорологический, симфонический, չեն տրված капитализм, капиталист, кровопролитие, машиностроение, метеорология, симфония և այլն:

Հույս առարկություն են վերցնում նաև բառերի ընտրության և տեղագրման վերաբերող հարցերը: Այն ետևողականությունը գոյություն ունի նույն կարգի բառերի ընտրության հարցում: Այսպես, ուսական բառացանկում տրված է алюминий, չի տրված барий, калий, կամ տրված է надстройка, չկա базис, տրված է депутат, չկա делегат, տրված է артерия, вена, չկա аорта, տրված է финиш, չկա старт և այլն: Բառարանի միայն առաջին էջում, մեր կարծիքով, պակասում են դպրոցականին անհրաժեշտ այնպիսի բառեր, ինչպես՝ абсолю́т, абсолюти́зм, абстра́кт, абстра́кция, агрессия, агрессивный, агрессор, агробиология, агроном, агрономия, администрация, адмирал, академия և այլն: Ուսական բառացանկի համար որպես թերություն պետք է դիտել նաև այն փաստը, որ չի տառի առկա մի բառ չի տրված: Թեկուզ և ուսուցանողի աջակցության կարգը պահպանելու համար կարելի է մի երկու բառ տեղագրել այդ հատվածում: օր.՝ йод, йодистый և այլն:

Բառարանի թարգմանական՝ հայկական բաժնում նկատվում են նույնպես որոշ թերություններ, երբեմն նաև վրիպումներ: Այդ կարգի թերություններից անհրաժեշտ է հիշատակել այն դեպքերը՝ ա) երբ ուսուցանողի բառերի համարժեքը բառով առկա փոխարեն տրվում են նրանց հայերեն նկարագրական թարգմանությունները, որոնց թիվը դժբախտաբար մեծ է, օրինակ՝ выступ—դուրս ցույցած մաս (կարկառ), сеялка—ցանիչ, восхождение—ելնելը, բարձրանալը (ելք), выдзача 1. ուսուցիչը վնասելը (տաք), 2. մատնելը (մատնություն, մատնում), выступление 1. դուրս գալը, 2. ելույթ ունենալը (ելույթ), купание—լողանալը (լող, լողացում), огадка—գուշակելը, լուծելը (գուշակում, լուծում) և այլն:

բ) Երբ չգտնելով հայերեն համապատասխանությունները, հեղինակները ստիպված են եղել բառը թարգմանել հայերեն տառադարձությամբ: օրինակ՝ бокс—բոքս (բռնցքամարտ), боксер—բոքսոր (բռնցքամարտիկ), журнал—ժուռնալ (ամսագիր, հանգես), шофер—շոֆեր (վարորդ, ավտովարորդ) և այլն:

գ) Երբ հայերեն մասը անհարկի խճողվել է բառի բարբարային իմաստներով, բարբարային բառերով և ձևերով, օրինակ՝ заградить, заграждать—բռնել, мелкий—սաղր, поросёнок գոնի (խոճկոր), да не разбегаться—զուրկել:

դ) Երբ հայերեն համապատասխան հոմանիշներից կամ բառերից չի ընտրվել ամենահաջողը և ամենագործածականը, օր.՝ холодильник—սառցարան, փոխանակ՝ սառնարան, устье—բերան (գետի), փոխանակ՝ գետաբերան, пенсионер—թոշակավոր (թոշակառու), с: мец—թոշակների՝ աթար (վարուժան), скважина—անցք, ելք (հորատանցք), вихта—պոմեմորություն (կերպարված, беретовый—ափի (առափնյա), токарный—ճախարակագործական, ճախարակագործի (խառնատային), выдумка—ճնարանք, ճնարք (սուտ, կեղծիք), горка—1) թղում, 2) շտապօգնություն (մրցավազք) և այլն: Վերահիշյալ թերություններով հանդերձ ուսական բառացանկի դպրոցական վերջին բառարանի իր նախորդներից ամենահաջողվածը պետք է համարել:

Այսպիսով, սովետական իշխանության տարիներին հրատարակված ուսական հայերեն և հայ-ուսերեն ընդհանուր բառարանները գործնական և գիտական կարևոր արժեք են ներկայացնում: Գործնականորեն նրանք մեծ դեր են խաղացել ինչպես ուսաց և հայոց լեզուների ուսուցման, այնպես էլ թարգմանական գործի բնագավառներում: Սույն բառարանների արժանիքները չեն սահմանափակվում միայն գործնական արժեքով: Կազմվելով հայոց և ուսաց լեզուների զարգացման տարրեր ժամանակաշրջաններում, այդ բառարանների հայկական և ուսական բառացանկերը, դարձվածաբանությունը, ինչպես նաև ուղղագրությունն ու շեշտադրությունը արտա-

ցույն են համապատասխանաբար հայոց և ռուսաց լեզուների զարգացման տարբեր շրջանների իրողությունները: Գիտական ակնհայտ արժեք են ներկայացնում հիշյալ բառարաններում արձանագրված բառապաշարային այն տեղաշարժները, որոնք կատարվել են հայոց և ռուսաց լեզուների մեջ վերջին 40 տարիների ընթացքում: Այդ բառարանները սակայն, հանգես չեն եկել լեզվական իրողությունները պատկերաբանագրողի գերում, այլ ակտիվ կերպով ներգործել են հատկապես հայոց լեզվի բառային կազմի և ուղղագրության նորմավորման ու կարգավորման ընթացքի վրա:

Վերահիշյալ փաստերը ակնառու կերպով վկայում են ռուս-հայերեն և հայ-ռուսերեն երկ-լեզվյան ընդհանուր բառարանների կազմության ուղղությամբ ձեռք բերված անվիճելի նվաճումների մասին:

Արդի էտապում հայ-ռուսերեն բառարանագրության առջև ծառացել են մի շարք հարցեր. որոնք առաջիկա տարիներին պետք է իրենց լուծումն ստանան:

1) Այժմ ամենահրատապ հարցը հայ-ռուսերեն մեծածավալ (ընդարձակ) բառարանի կազմությունն է: Նորակազմ բառարանը պետք է պարունակի ժամանակակից հայոց լեզվի բառային կազմի և դարձվածաբանության ամբողջ հարստությունը, բառերի քերականական և ռեմանտիկական նշումներով:

2) Ռուս-հայերեն բառահատոր բառարանը իր բոլոր ակնհայտ առավելություններով հանգերձ՝ միայն իր բազմահատորության պատճառով օգտագործման համար գործնական դժվարություններ է ստեղծում: Մեր կարծիքով, անհրաժեշտ է՝ բառարանից բեռնաթափել, բնագրային օրինակները, բոլոր բացատրություններն ու սլարգաբանումները, նկարագրական թարգմանությունները, թողնել ամբողջությամբ ռուսական բառացանկն ու դարձվածաբանությունը՝ հայերեն բառային համանշանակներով և մեկ հատորով հրատարակել ռուս-հայերեն ընդարձակ բառարան:

3) Մեր կարծիքով անհրաժեշտ է նաև վերանայել ռուս-հայերեն դպրոցական բառարանի ռուսական բառացանկը, այն դարձնել ավելի ռացիոնալ՝ առաջնորդվելով դպրոցը կյանքին կապելու մասին պարտիայի որոշումներով: Հրատապ հարց է նաև նույն սկզբունքներով հայ-ռուսերեն բառարանի կազմումը:

Վերահիշյալ խնդիրներից թերևս ամենադժվարը հայ-ռուսերեն ընդարձակ բառարանի կազմության հարցերն են: Բառարան կազմողներն առաջին հերթին պետք է հաղթահարեն հայերեն բառացանկի ընտրության և կազմության հետ կապված որոշ դժվարություններ, ինչի՞ հիման վրա պետք է կազմել հայերեն բառացանկը:

Առայժմ հրապարակի վրա է Ստ. Մալխասյանցի բառահատոր «Հայերէն բացատրական բառարանը», որը պարունակում է գրաբարի, միջին հայերենի, աշխարհաբարի և հայերեն բարբառների բառերն ու դարձվածները: Թեև սույն բառարանը բառապաշարով և դարձվածաբանությամբ ամենահարուստն է մինչև այժմ հրատարակված հայերեն բոլոր բառարաններից, պետք է, սակայն, նշել, որ նրանում մուտք չեն գործել XIX—XX դարի հայ դասական և ժամանակակից գեղարվեստական գրականության, մամուլի ու հրապարակախոսության, հանրամատչելի գիտատեխնիկական և հասարակական-քաղաքական գրականության շատ բառեր ու դարձվածներ, որոնց թիվը 20—25 հազարի է հասնում: Այդ կարգի բառերն ու դարձվածները ընդգրկված են Հայկական ՍՍՌ ԳԱ լեզվի ինստիտուտի կոլեկտիվի կողմից կազմվող բառահատոր «Արդի հայերենի բացատրական բառարանում»:

Վերահիշյալ երկու աղբյուրներն էլ պետք է հիմք դառնան հայ-ռուսերեն ընդարձակ բառարանի հայերեն բառացանկի համար:

Հայերենից ռուսերեն թարգմանության գործին նպաստելու համար, մեր կարծիքով, անհրաժեշտ է հայերեն բառացանկում ընդգրկել նաև այն բարբառային բառերն ու դարձվածները, որոնք մուտք են գործել հայ գեղարվեստական գրականության մեջ: Այնուհետև, ավելի ազատ պետք է վարվել նաև հասարակական-քաղաքական և գիտատեխնիկական տերմինաբանության ընտրության հարցերում: Հիշյալ կարգի բառերի քանակը հայ-ռուսերեն բառարանի հայկական բառացանկում պետք է ավելացնել, առանց ծայրահեղությունների մեջ թնկնելու:

Հայ-ռուսերեն ընդարձակ բառարանի կազմությանն առնչվող հուզող հարցերից է բառահոգվածում բնագրային օրինակների տեղադրման ու թարգմանության հարցը:

Մեր կարծիքով բառարանի հեղինակները չպետք է հետևեն ռուս-հայերեն բառահատոր բառարանին և, ելնելով հայ-ռուսերեն բառարանի շահերից, բառահոգվածում չպետք է տե-

զադրեն բառերի իմաստները հաստատող բնադրային օրինակներ: Վերջիններս կարող են միաձայն ծանրաբեռնել բառահոգվածը և մեծացնել քառարանի ծավալը: Բնագրային օրինակների փոխարեն, մեր կարծիքով, բառահոգվածում պետք է տրվեն ավելի շատ զանազան տիպի կայուն կապակցություններ, դարձվածներ ու մաղաղդյալ տերմիններ, որով, անշուշտ կշահի քառարանը: